Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

ПРИКАЗ
ՀՐԱՄԱՆ

«15» 04 2026 г. № 38

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ - ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 126 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ)՝ 06.03.2026 թվականի N 200 (Մուլ N Ն/70/11636-2026) գրությունն ու ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և Հիմնարկի կանոնադրության 74-րդ կետի 10-րդ ենթակետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Վարչության նախագահ - Գլխավոր տնօրենի՝ 2021 թվականի հոկտեմբերի 20-ի ««Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հանրակրթական դպրոցի սովորողներին ուսման վարձավճարի զեղչի և արտոնությունների տրամադրման կարգը հաստատելու և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի օգոստոսի 31-ի N 63 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 126 հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Աշխատակազմի ղեկավար-գործերի կառավարիչ Վ. Ստեփանյանին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**

Հավելված
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«15» 04 2026թ. N 38 հրամանի

Հավելված
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Վարչության նախագահ - Գլխավոր տնօրենի՝
20.10.2021 թվականի N 126 հրամանի

ԿԱՐԳ
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԶԵՂՉԻ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) հանրակրթական դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) սովորողներին ամենամյա ուսման վարձավճարի զեղչի և արտոնությունների տրամադրման մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է տարին մեկ անգամ, որի նպատակն է խրախուսել Դպրոցի սովորողների բարձր առաջադիմությունը և խթանել նրանց մտավոր, ֆիզիկական և հոգևոր ակտիվությունը:

3. Մրցույթն անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ մինչև հուլիսի 15-ը՝ բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի:

4. Կարգը հաստատվում է, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Հիմնադրի հրամանով:

II. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԶԵՂՉԻ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Մրցույթը կազմակերպում և անցկացնում է Հիմնարկի տնօրենի հրամանով ձևավորված մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

6. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության աշխատակազմի և Հիմնարկի համապատասխան աշխատողներ:

7. Հանձնաժողովի գործունեության կարգը (աշխատակարգը) հաստատվում է Հիմնարկի տնօրենի հրամանով:

III. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԶԵՂՉԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

8. Մրցույթին կարող են մասնակցել Դպրոցի 4-11-րդ դասարաններն ավարտած բոլոր այն սովորողները, ովքեր ամբողջ ուսումնական տարվա ընթացքում հանդիսացել են Դպրոցի սովորող և ուսումնական տարվա արդյունքներով ունեցել են 9.0 և բարձր միջին գնահատական: Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան

հայտերի միջոցով (հայտի ձևը հաստատում է Հանձնաժողովը)՝ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով: Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում 9.0 և բարձր միջին գնահատական չունեցող, սակայն ուսումնական տարվա ընթացքում ակնառու հաջողություններ և ձեռքբերումներ ունեցող սովորողները Հանձնաժողովին են ներկայացնում համապատասխան փաստաթղթեր:

9. Մրցույթի հաղթողի ընտրությունն իրականացվում է հետևյալ փուլերով՝

1) բարձր կամ գերազանց առաջադիմություն (միջին գնահատականը՝ 9.0 և բարձր) ունեցող սովորողների ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին Հանձնաժողովի անունից ուղարկվում է էլեկտրոնային հայտարարություն Մրցույթի անցկացման, պայմանների և ժամկետների մասին.

2) Մրցույթին մասնակցելու (որպես թեկնածու առաջադրվելու) համար սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը, սահմանված կարգի համաձայն, ներկայացնում է համապատասխան հայտն ու անհրաժեշտ փաստաթղթերը.

3) Մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած և հայտը ներկայացրած սովորողները Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում մասնակցում են ընդհանուր գիտելիքների ստուգմանը, այնուհետև՝ հարցազրույցի՝ Հանձնաժողովի հետ:

Առարկաների ցանկը, որոնցից հաշվարկվում է միջին գնահատականն, ու անցկացվում է գիտելիքների ստուգում, ըստ դասարանների, յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է Հիմնարկի տնօրենի հրամանով:

Նշված չափանիշների՝

ա) ուսումնական տարվա միջին գնահատական (25%),

բ) ընդհանուր գիտելիքների ստուգման արդյունք (50%),

գ) հարցազրույցի արդյունք (25%),

հիման վրա Հանձնաժողովն ընտրում է ամենամյա ուսման վարձավճարի զեղչի տրամադրման մրցույթի հաղթողներին:

10. Հաղթող են ճանաչվում 9.0-ից բարձր միավոր հավաքած սովորողները, բայց ոչ ավել, քան յուրաքանչյուր դասարանական հոսքից (տվյալ դասարանի բոլոր դասարանական խմբերը միասին) առավելագույնը երեքական սովորող, որոնց Հանձնաժողովի որոշմամբ հաջորդ ուսումնական տարվա համար տրվում է ուսման վարձավճարի 40 տոկոսի չափով զեղչ («Գազպրոմ Արմենիա»-ի զեղչ)՝ յուրաքանչյուր կիսամյակից առաջ երկու հավասար մասերով: Ընդ որում, հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում 9.0-ից ցածր միջին գնահատական ունենալու դեպքում ուսման վարձավճարի 40 և ավելի տոկոսի չափով զեղչ ստացող սովորողը կզրկվի 2-րդ կիսամյակի համար զեղչ ստանալու իրավունքից:

11. Բացառիկ դեպքերում (միջազգային, հանրապետական օլիմպիադաներում, առարկայական և այլ մրցույթներում լավագույն արդյունք գրանցելիս և (կամ) մրցանակային տեղ զբաղեցնելիս, ինչպես նաև այլ բացառիկ դեպքերում), Հիմնարկի տնօրենի առաջարկությամբ, Մրցույթում հաղթող ճանաչված սովորողները «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության համաձայնությամբ կարող են ստանալ Կարգի 10-րդ կետում նշված զեղչի չափից ավելի զեղչ, իսկ լավագույն սովորողը՝ ուսման վարձավճարի 90 տոկոսի չափով զեղչ («Հրանտ Թադևոսյանի անվան» զեղչ):

12. Մրցույթում հաղթող չճանաչված, սակայն 9.0 և բարձր միավոր հավաքած սովորողներին, բայց ոչ ավել, քան յուրաքանչյուր դասարանական հոսքից (տվյալ դասարանի բոլոր դասարանական խմբերը միասին) առավելագույնը տասնհինգական սովորող, Հանձնաժողովի որոշմամբ հաջորդ ուսումնական տարվա համար տրվում է ուսման վարձավճարի 15 տոկոսի չափով զեղչ («Ուսումնա-սպորտային համալիրի դպրոց»-ի զեղչ):

13. Դպրոցի այն սովորողները, որոնք, մասնակցելով Մրցույթին, չեն ստացել Կարգի 10-րդ կամ 12-րդ կետերով սահմանված զեղչերը, կամ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում չեն ունեցել 9.0 և բարձր միջին գնահատական, սակայն ուսումնական

տարվա ընթացքում ունեցել են ակնառու հաջողություններ և ձեռքբերումներ, Հանձնաժողովի որոշմամբ հաջորդ ուսումնական տարվա համար կարող են ստանալ ուսման վարձավճարի 15 տոկոսի չափով զեղչ:

IV. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Ռուսաստանի Ի.Մ.Գուբկինի անվան Նավթի և գազի պետական համալսարանում Հիմնարկի Դպրոցի շրջանավարտների ուսումնառությունը խթանելու նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում՝ մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում, Հանձնաժողովի կողմից անցկացվում է հատուկ մրցույթ, որում հաղթող ճանաչված ՀՀ քաղաքացիություն ունեցող Դպրոցի կամ այլ ուսումնական հաստատությունից Դպրոց տեղափոխվող 12-րդ դասարանի սովորողը Կարգի 17-րդ կետում նշված պայմանագիրը կնքելու դեպքում որպես արտոնություն ազատվում է Դպրոցի 12-րդ դասարանում ուսման վարձավճարի վճարումից (այսուհետ՝ արտոնություն):

15. Մրցույթն անցկացվում է առավելագույնը 2 փուլով՝

1) մրցույթի 1-ին փուլին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիություն ունեցող Դպրոցի 12-րդ դասարանի այն սովորողները, ովքեր նախորդ ուսումնական տարվա ընթացքում (11-րդ դասարանում) առնվազն 1 (մեկ) կիսամյակ հանդիսացել են Դպրոցի սովորող և նախորդ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում ունեցել են 8.0 և բարձր միջին գնահատական.

2) եթե մրցույթի 1-ին փուլի արդյունքներով հաղթողը չի որոշվում, ապա հայտարարվում է մրցույթի 2-րդ փուլ (ինչի մասին տրվում է համապատասխան հայտարարություն), որին արդեն կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիություն ունեցող 12-րդ դասարանի սովորողներ նաև այլ ուսումնական հաստատություններից, ովքեր նախորդ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում ունեցել են 8.0 և բարձր միջին գնահատական: Սույն պարբերությամբ նախատեսված՝ այլ ուսումնական հաստատության սովորողը մրցույթում հաղթող ճանաչվելուց անմիջապես հետո ընդունվում է Դպրոց.

3) առարկաների ցանկում, որոնցից հաշվարկվում է միջին գնահատականն ու անցկացվում գիտելիքների ստուգում, ներառվում են «Ռուսաց լեզու», «Մաթեմատիկա», ինչպես նաև «Ֆիզիկա» կամ «Քիմիա» առարկաները՝ մրցույթի մասնակցի ցանկությամբ:

16. Մրցույթի մասնակիցներից ընտրվում է առավելագույնը 2 (երկու) հաղթող, ովքեր ազատվում են Դպրոցի 12-րդ դասարանում ուսման վարձավճարի վճարումից:

17. Մրցույթում հաղթող ճանաչված սովորողի (վերջինիս ծնողի կամ օրինական ներկայացուցչի) հետ, Կարգի 14-րդ կետում նշված՝ արտոնության կիրառումից առաջ, կնքվում է համապատասխան պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), ըստ որի՝ սովորողը, որպես նպատակային ուսուցում, պարտավորվում է Դպրոցն ավարտելուց անմիջապես հետո ընդունվել Ռուսաստանի Ի.Մ.Գուբկինի անվան Նավթի և գազի պետական համալսարան, սովորել և ավարտել այն, ինչից անմիջապես հետո անցնել համապատասխան աշխատանքի «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում՝ առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով: Ծնողն ու սովորողը սովորողի պարտավորությունների խախտման համար «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

18. Պայմանագիրը Կարգի 14-րդ կետում նշված՝ արտոնության կիրառումից առաջ չկնքելու (դրա կնքումից խուսափելու) դեպքում սովորողը զրկվում է արտոնությունը ստանալու իրավունքից, իսկ Պայմանագրի պայմանները «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունից անկախ պատճառներով խախտելու դեպքում սովորողը (վերջինիս ծնողը կամ օրինական ներկայացուցիչը) պարտավորվում է փոխհատուցել («Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը վճարել) Դպրոցի 12-րդ դասարանի ուսման վարձավճարի գումարը:»: